

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի և Բաֆֆի Հովհաննիսյանի` օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող` մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում է Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ԱՏԳ ԱԱ 0511 91 901 (բեղմնավորված ձկնկիրթ), 0407 (թռչունների ձվեր` կեղևով, թարմ, պահածոյացված կամ եփված) և 2309 90 99 (կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերքներ, այլ) ծածկագրերին դասվող ապրանքների համար մաքսային սահմանին ավելացված արժեքի հարկը չհաշվարկել և չգանձել:

Հարկ ենք համարում նշել, որ նշված օրենքով հաստատված է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող այն ապրանքների ցանկը, որոնց համար Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, սակայն ներկայացված նախագծով առաջարկվող ԱՏԳ ԱԱ 0407 և 0511 91 901 ծածկագրերին դասվող ապրանքների համար գործող օրենսդրության (ՀՀ

մաքսային օրենսգրքի 102-րդ հոդված) համաձայն գանձվում է մաքսատուրք՝ մաքսային արժեքի 10 տոկոսի չափով:

Հաշվի առնելով նշվածը, հայտնում ենք, որ նշված երկու ծածկագրին դասվող ապրանքները չեն կարող ընդգրկվել առաջարկվող նախագծում:

Մյուս կողմից ԱՏԳ ԱԱ 23 90 99 ծածկագրին ձկների կերակրման համար նախատեսված մթերքների հետ դասվում են նաև այլ կենդանիների կերերը: Այսպիսով, նախագծով ներկայացված այս առաջարկի ընդունման դեպքում մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողության շրջանակներում գործնականում անհնար կլինի տարանջատել ձկների կամ այլ կենդանիների կերակրման համար նախատեսված կերերը, ինչը կարող է հարկերից խուսափման հնարավորություններ ստեղծել:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում արտադրվում են ձկների և այլ կենդանիների կերակրման համար նախատեսված կերեր, որոնց իրացումն ազատված չէ ավելացված արժեքի հարկի վճարումից, ուստի մաքսային սահմանին նշված ապրանքների ներմուծման համար ավելացված արժեքի հարկի չհաշվարկելն ու չգանձելը տեղական արտադրության կերերի ձեռքբերման փոխարեն կյութանի այդպիսի կերերի ներմուծումը:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եւ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եւ գանձվում է Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եւ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եւ գանձվում է Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 29-ի ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածով սահմանված ցանկի «030110 100 կենդանի ձկներե տողից հետո լրացնել 3 հետեյալ բովանդակությամբ նոր տողերով.

«051191901	բեղմնավորված ձկնկիթ
0407	տոհմային ինկուբացիոն ձու
23099099	տոհմային ինկուբացիոն ձու

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքի 1-ն հոդվածի 3-րդ պարբերության «ԱՏԳ ԱԱ-ի ե բառերից հետո ավելացնել 051191901, 0407, 23099099 թվերը:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ 0 ՏՈԿՈՍ ԴՐՈՒՑՔԱՉԱՓ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑԻՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՉԻ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՎ ԳԱՆՁՎՈՒՄԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն նախագծի ընդունումը կխթանի Հայաստանի Հանրապետությունում ձկնաբուծության զարգացմանը: Ըստ ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբուծության ինստիտուտի կատարած հետազոտությունների՝ 1983թ.-ին Մեանում սիգր եղել է 10-11 հազար տոննա, այն ժամանակ լճի հիմնական ձկնային պաշարների 80-90%-ը կազմում էր սիգ տեսակի ձուկը: 1980-ականների վերջին, 1990-ականների սկզբին այն հասել էր առավելագույնի՝ 30 հազար տոննա, 2000թ.-ին իջել էր մոտավորապես 2000 տոննայի, իսկ այսօր ունենք ընդամենը 170-180 տոննա:

Օրենքի ընդունման արդյունքում սպասվում է արհեստական ջրամբարներում
ձկնաբուծության խթանում, ինչը կհանգեցնի Մեանա լճից ձկնորսության նվազման եւ
Մեանում ձկան պաշարի վերականգնմանը հավելյալ օժանդակություն: Բացի այդ, այն նաեւ
հնարավորություն կընձեռի ձկնաբուծությամբ զբաղվող փոքր ու միջին
ձեռնարկություններին, առավել նպաստավոր վիճակում հայտնվելով, մեծացնելու
արտահանման հնարավորությունները, ինչի արդյունքում համեմատաբար կավելանան
արտարժույթի հոսքերը դեպի հանրապետություն: